ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» մարտի 2020թ. № 91

## ՍԻՄՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՇԻՐՈՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33.1-րդ կետի «ա» ենթակետի, 33.2-րդ, 34.2-րդ կետերի և 35-րդ կետի «գ» և «ե» ենթակետերի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշման, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2020 թվականի մարտի 2-ի թիվ 02032020-06-0044 վկայականը և Սիմոն Հովհաննեսի Շիրոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «քաղաք Սպիտակ, Պանրագործների թաղամաս, թիվ 244» հասցեում գտնվող 06-006-0054-0013 կադաստրային ծածկագրով 0,10951 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից 0,1 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 528 000 ՀՀ դրամ, իսկ 0,00951 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 150 638 ՀՀ դրամ, օրինական ճանաչված 23,05 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը 39 646 ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին (ծնված 24.05.1955թ.):

2. Սիմոն Հովհաննեսի Շիրոյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.մարտի 05
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» մարտի 2020թ. № 92

## ԱՐԱՅԻԿ ՌԱՖԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 2020 թվականի մարտի 5-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանի կողմից Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ**.

1. Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2020 թվականի մարտի 10-ին, ժամը 12:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.մարտի 5
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» մարտի 2020թ. № 93

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մամիկոն Առաքելյանի 2020 թվականի փետրվարի 27-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Մամիկոն Առաքելյանին (ՀՎՀՀ 66003417) տալ «ք. Սպիտակ Կենտրոն 1, Ալեք Մանուկյան» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 40 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 5
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» մարտի 2020թ. № 94

## ՌՈՒԲԻԿ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131476 վկայականը և Ռուբիկ Սողոմոնի Շահբազյանի ներկայացուցիչ Սամվել Վլադիմիրի Շիրոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ռուբիկ Սողոմոնի Շահբազյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Այգեստան փողոցի վրա գտնվող 06006 486-3 կադաստրային ծածկագրով 0,106 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան փողոց, թիվ 38» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» մարտի 2020 թվականի N 95

# ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-11), աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-27), աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-30), աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-32), աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-6) համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2020 թվականի մարտի 10-ին անցկացվող մրցույթների՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 9
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2020 թվականի մարտի 9-ի թիվ 95 որոշման

# ԿԱԶՄ
# ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| հ/հ | անունը, ազգանունը | հաստատությունը (մարմինը) | պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | Անահիտ Գյուլազյան | Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ | Աշխատակազմի քարտուղար |
| 2 | Նորայր Յարմալոյան | Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ | Աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան |
| 3 | Արփինե Մատինյան | ՀՀ Լոռու մարզպետարան | Լոռու մարզպետարանի կրթության. մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետի տեղակալ |
| 4 | Ռաֆայել Հարությունյան | ՀՀ Լոռու մարզպետարան | Լոռու մարզպետարանի կրթության. մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար |
| 5 | Լուսինե Մաթոսյան | Տեղական ինքնակառավարման մարմին | Սպիտակ համայնքի ավագանու անդամ |
| 6 | Արմինե Օհանյան | «Սպիտակի Վարդանանց անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ուսուցիչ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

10/03/2020
11:00

*09/03/2020 11:22:30 A*
*Կրտսեր պաշտոններ (ծածկագրեր ՝ ՄՀ-3.1-11, ՄՀ-3.1-27, ՄՀ-3.1-30, ՄՀ-3.1-32, ՄՀ-3.2-6)*

# Հանձնաժողովի կազմը

ԱՆԱՀԻՏ ԳՐԻՇԱՅԻ ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

*Հաստատությունը ՝* Համայնքապետարան

*Պաշտոնը ՝* ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՆՈՐԱՅՐ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ

*Հաստատությունը ՝* Համայնքապետարան

*Պաշտոնը ՝* ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ԻՐԱՎԱԲԱՆ

ԱՐՓԻՆԵ ՊԱՐԳԵՎԻ ՄԱՍԻՆՅԱՆ

*Հաստատությունը ՝* Մարզպետարան

*Պաշտոնը ՝* ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

*Այլ տվյալներ ՝* ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հաստատությունը ՝* Մարզպետարան

*Պաշտոնը ՝* ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻՇԻ ՄԱԹՈՍՅԱՆ

*Հաստատությունը ՝* Ավագանի

*Պաշտոնը ՝* ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՄԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՕՀԱՆՅԱՆ

*Հաստատությունը ՝* Գիտական հաստատություններ

*Պաշտոնը ՝* «ՍՊԻՏԱԿԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, ՈՒՍՈՒՑԻՉ

*Այլ տվյալներ ՝* ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ